

# **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի № 1015-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

N -

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ

ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի № 1015-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի  
օգոստոսի 9-ի «Ոչ պարենային արտադրանքի տեխնիկական  
կանոնակարգերի վերանայման պլանավորման ծրագիրը հաստատելու  
մասին» № 1015-Ն որոշմամբ հաստատված հավելվածում (այսուհետ՝  
Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները.
- Ուժը կորցրած ճանաչել Հավելվածի 14-րդ կետը:
- Հավելվածի 2-րդ, 7-րդ և 24-րդ կետերի «Իրավական ակտի  
վերանայման վերջնաժամկետը» 6-րդ սյունյակում «2020 թ.» բառերը  
փոխարինել «2022 թ.» բառերով:
- Հավելվածի 16-րդ կետի «Իրավական ակտի վերանայման  
վերջնաժամկետը» 6-րդ սյունյակում «2019 թ.» բառերը փոխարինել  
«2023 թ.» բառերով, իսկ «Իրավական ակտի նախագիծը վերանայելու  
համար պատասխանատու պետական մարմնի անվանումը» 5-րդ  
սյունյակում «ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական  
տեխնոլոգիաների նախարարություն» բառերը փոխարինել «ՀՀ բարձր  
տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն» բառերով:
- Հավելվածի «Ֆինանսավորման աղբյուրը» 7-րդ սյունակում բոլոր  
կետերում «պետական բյուջե, դրամաշնորհներ, միջազգային դոնոր  
կազմակերպություններ» ձևակերպումից հանել «դրամաշնորհներ»  
բառը:
- Հավելվածի 2-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ, 13-րդ և 24-րդ կետերում

«տնտեսական զարգացման և ներդրումների», «բնապահպանության»,  
«Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների» և  
«տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների» բառերը  
փոխարինել համապատասխանաբար «Էկոնոմիկայի», «շրջակա  
միջավայրի» և «տարածքային կառավարման և  
ենթակառուցվածքների» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը  
հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ